Գևորգ Էմին

Մի սիրո պատմություն

Ի՞նչ է պետք մարդուն
Սիրո մեջ հզո~ր լինելու համար.-
Ավա~ղ,
Շա՛տ չնչին,
Հասրա~կ մի բան՝
Քի՛չ սիրել
Եվ կամ… բնավ չսիրե՛լ…

Աստվա~ծ ազատի այսպիսի բախտից
Եվ այս դրախտի՛ց,
Որն ի~նձ է տրվե՛լ…

Երբ ե՛ս եմ սիրում՝
Փխրո~ւն եմ այնքան,
Թո~ւլ,
Անօգնակա~ն,
Սակայն՝ երջանի~կ…

Երբ ի~նձ են սիրում,
(Եվ ես չե~մ սիրում)-
Անտարբե~ր եմ ա՛յն ծառի բնի պես,
Որին փարվում է բաղե~ղը կանաչ.
Բի՛րտ, այն ժայռի պես,

Որի մոտ ծովը կուզեր… մերկանա~լ.
Սա~ռը,-
Որմի պես այն եկեղեցու,
Որը համբուրո՛ւմ,
Որի մոտ մո~մ են վառում մեր կանայք.
Եվ ուժե՛ղ,-
Դժբա՛խտ այն մարդու նման,
Որը սիրվո՛ւմ է,
Սակայն… չի~ սիրում:

Ուժե՛ղ ու դժբա՛խտ,
Հզո՛ր ու … դժգո՛հ,
Քե՛զ եմ կարկառել ձեռքերըս ահա,
Սիրո Աստվա՛ծըդ ամանակարող,
Ո~ւժ տուր հզորիս
Եվ տուր քաջությո՛ւն,
Այս… թույլ աղջկան ասել՝ .

Ասել մի~ անգամ,
Գոնե մի~ անգամ,
Երբ,- քանի~ տարի,-
Քանի~ անգամ եմ այս նույն շուրթերով –
Ստե՞լ…
Ո՛չ, ինչո՞ւ,-
Անզո~ր լինելով հերքել՝ ,
Հեգել՝

Ո~ւժ տուր հզորիս.
Բայց ինչպե~ս , ինչպե~ս ,
Երբ իմ մի հատիկ
Ջերմ շշունջից ու խոսքի՛ց սերում,
Շողն՝ այս քնքշանքից թացվա~ծ աչքրից,
Դողն՝ այս բերկրանքից բացվա~ծ շուրթերի

Եվ լցվա~ծ սրտի,
Որ տրոփում է միայն ի~նձ համար,
Որ տրոփում է միայն ի~մ սիրուց,
Ի՛մ, որ … չե~մ սիրում…

Ո~ւժ տուր հզորիս.
Բայց ինչպե~ս, ինչպե~ս,
Երբ իմ մի հատիկ
Ջերմ շշունչից ու խոսքի՛ց է սերում,
Շողն՝ այս քնքշանքից թացվա~ծ աչքերի,
Դողն՝ այս բերկրանքից բացվա~ծ շուրթերի
Եվ լցվա~ծ սրտի,
Որ տրոփում է միայն ի~նձ համար,
Որ տրոփում է միայն ի~մ սիրուց,
Ի՛մ, որ… չե~մ սիրում…

Ո~ւժ տուր, որ ասեմ և կա՛մք…
Սակայն ո՞վ,
Ո՞վ կարող է, սի՛րտ,
Տրորե~լ ոտքով կոկո՝նն այս բացվող,
Ջարդե~լ նորատունկ այս շի~վը դալար,
Ցեխով փզկե~լ այս կարակչող առո՛ւն,-
Որ չկարկաչի~ զուցե էլ բնավ,
Որ զուցե բնավ էլ ծաղիկ չտա~,
Եվ էլ չխշշա~ կանաչ բացատում…

Տե՛ս, վազո~ւմ է նա թևերը բացած,
Եվ սիրուց հարբած ինձ մո՛տ է սուրում,
Գալի~ս է էլի…

(Ինչո՞ւ ես լռել
Ասա՝ …)

Եվ, ի~նչ որ ուներ,
Եվ, ի~նչ որ ունի,
Ի~նչ որ կունենա,-
Իր բախտի ու իր կյանքի հետ միակ
Ինձ զո~հ է բերում…

Ո~ւժ տուր , լսո՞ւմ ես,
Սիրո Աստվա՛ծըդ ամենակարող,
Գեթ ա՛յս երեկո ասել՝ ,
Որ չկրկնվի
Նրա տենչա՛նքն ու
Իմ տանջա՛նքն էլի..